

Բառերի միջաւմ՝ կրում է հետեւեալ փոփոխութիւնները.

1. Ա. պատուիի՝ պատրայք. սամուրի՝ սամոյր. դուսի՝ կոյս. տակոյի՝ թակոյկ. տարակուած՝ տարակոյս? (2ուր.) • աղբազունի՝ տարագոյն. զունի՝ զոյն. մակուկու մակոյկ (շատ կասկածական). նիմուշի՝ նմոյշ:

2. Ա. ամրուի՝ համբոյր. զոյի՝ զոյդ. միզոյի՝ լնկոյդ:

3. Այս ուեւ վիւ խոյրիս խոյրի՝ խոյր. կապուտի՝ կապոյտ. զիլինի՝ զոյն:

Ու սկզբում մնում է ու. օր. ուրա՞ ուռն, մուրճ. ունի՞ ունջ. ուռնախ՝ ուռնուլ? (վերջի երկուըը 2ուրինովից):

Ու բառերի վերջը նմանապէս. ձո՞ւ ձու? բո՞ւ բու. ու՞ առու:

Ու բառերի մէջ բաղաձայնի քով. 1. մնում է ու առ հասարակ. օրինակ. խախութի՝ խախուտ. բուծի՝ բուծ. տապուժակի՝ տապուժակ. զորի՝ զորմատուրի՝ մատուռ. բուրդի՝ բուրդ. խուփի՝ խուփ. հումի՝ հում. մունչի՝ մունչ. շամփուրի՝ շամփուր. շումի՝ շում. պտուի՝ պտուղ. մուրի՝ մուր. լուծի՝ լուծ. զուզի՝ զուզ. լուրջի՝ լուրջ. բունի՝ բուն. սկորամ՝ ակում. ակումի՝ ակումք. դանդարուիկ՝ դալուկ:

2. Հետեւեալ բառերի մէջ լինում է ու շրջանի՝ շրջան. կանիսի՝ կանուխ. պայիսի՝ պայուխտ. պատամի՝ պատուհան. մածոնի՝ մածուն. մզոսակի՝ գուսան. լորին՝ լորիա. մանձի՝ ձունձ. սկուն. սկուրամ՝ ակում. ակումի՝ ակումք. դանդարուիկ՝

3. Ա. տամալի՝ տրմուղ բասի մէջ:

4. Վրացերէնի օրէնքներին համաձայն ջընջուել է միսին՝ մուխ. սրիսի՝ սուրալ բառերում: Ու ձայնաւորի քով. 1. ով. օր. շատրվանի՝ հիւսուածք (հմմա. հայ. շատրւանի ծածկոց). նովազի՝ նուագ. գառլովիրա՞ աղուանալ. անուշ համ առնել. 2. Վ. զվարակի կամ զուարակի՝ զուարակ. զիրվանի՞ զրուան:

Առանձին պէտք է խօսել բարձմանուիկ՝ բարձուենեակ. մատրակիցա՞ մատուռակ. խւեխ. խիւեխ. խուել բառերի վերայ:

(Կը շարունակուի)

Հրաշեայ Յ. Անառեան.

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

1900 բուականի համաշխարհային հանդիսի տիկիւականի համատեսիլ պատիւրը: Փարիզի հանդիսի հրաշլիքների մէջ անշուշտ զիսաւոր տեղ կը բունի տիւնիզերի պանորամը. երկամուղով գէպի նրանեան դաշտը եկող հանդիսատեսների աչքին նախ և

առաջ կերեւայ մի վիթխարի շէնք՝ ահազին աշխարհացոյց զնոտի ձեռվ և 50 մետր տրամագծով: Այս լազմահամակ զանգուածը նստած կը լինի չորեքշուսի խարսխի (մեքենավիթի) վերայ: որ նոյնպէս հաստատուած կը լինի չորս քանդակագործ սիւների և 25 մետր երկարութեամբ կամարների վերայ:

Այդ հսկայական գունտը կը ձեւացնէ տիեզերք. գա կատարեալ կերպով կը պատկերացնէ երկնակամարը իւր անթիւ աստղերով, իւր խորհրդաւոր յարաշարժ աշխարհներով: Տերեկը գա մի երկնակապօյտ մեծահրաշ զնտի տեսիլ կունենայ, իսկ գիշերը՝ մութը իջնելու ժամանակ՝ յանկարծ կը վառուի անթիւ ճրագներով և կը ստանայ գիշերուայ սիրուն երկնիքի տեսք՝ իւր ցիրուցան չողջողուն աստղերով և հոյակապ աստեղատուններով—իրանց ծշգրիտ հեռաւորութեանց մէջ. Մեր՝ նովիթի չորս ծայրերում կանգնեցուցած են Երամազգ (Առւսնթագ), Կոռնոս (Երևակ), Աւրանոս և Պիսիդոն աստուածների անդրիներ, որոնցից իւրաքանչիւրն իւր մոլորակն է պահպանում: Երաքանչիւր մոլորակի չափը ծիշտ համեմատ պէտք է լինի այդ ամբողջ զնտի մեծութեան: որ միւնոյն ժամանակ արեգակի չափն է ներկայացնում: Խւ որովհետև կինդրոնական զնտի տրամագիծն է 50 մետր, Լուսունթագինը կը լինի—4մ. 91, Երևակինը—3մ. 18, Աւրանոսինը—1մ. 18 և Պիսիդոնինը—1մ. 94. Այսպէս նաև ուրիշ բազմաթիւ ուսուումնական տեղեկութիւններ են տրվում՝ կամ ծիշտ համեմատական ձեւերով և կամ լոկ նշանացի կերպով, այսինքն տախտակներով և ծանուցագիր պիտակներով:

Բացի ուսումնական շահագրգութիւնից, համատեսիլ պատկերը պյլեալ հրապոյրներ են ունի, զոր օր. գուք կարող էք պտուտածն երկամուղիով բարձրանալ երկնագնտի շուրջ մինչև վիրին զագաթը և այնտեղից մի հայեացքով տեսնել ամբողջ հորիզոնը: Ա, երեւնքը այնպէս ճարտարութեամբ է յարմարեցուցած, որ երկամուղու կառքերը առ ի շեղ չեն մղվում: այլ միշտ հորիզոնական գիրք են պահպանում:

Գնտի ներսը կը տեղաւորուի Ֆլամմարիոնի աստղաբաշխական թանգարանը. Այստեղ կը գտնէք ամբողջ պատմութիւն, թէ ինչ ջանքերով մորգս հետզետե աշխարհակալութիւններ է գործել երկնային կամարում. սկսած մեր նախահայրերի գաղափարներից՝ մինչև նորագոյն զարմանասքանչ զիւտերը—բոլորը կիմանաք, երկնքի հրաշալիքները, աչքին հազիւ նշանակելի աստղիկները կը հանդիսանան ձեր առաջ ապշեցուցիչ ծշգրւթեամբ, և այն բոլոր նորհրդաւոր և հեռաւոր երկնակամար տիեզերքը՝ կարծես թէ կիջնի, որպէս զի գուք տեսնէք և հասկանաք, թէ այդ բոլոր ջոկ ջոկ մասերը՝ ինչպիսի կատարելութեամբ ի մի են միանում: Աշխարհացոյցերի, կաղապարների, երկնագնտերի, լուսա-

նկարների, խորաքանդակների մեծ քանակութիւնը, էլ չենք ասում զիտելու յարմարեցուցած ամէն տեսակ գործիքներն ու սարուածները՝ լրացնում են այս ճոխի թանգարանի հարստութիւնը:

Աստղաբաշխական թանգարանից ելնելով՝ գուք նստում էք նորագոյն ելեքտրական շարժուն մեքենայի մէջ, և ձեր առաջ բացվում են նոր սպանչելիքներ. ընդերկրեայ տիեզերքից գուք մտնում էք ստորերկրեայ աշխարհը, և կարծ ժամանակում ձեր առաջ կը թանան երկրի պատմութեան բոլոր պատկերները. Աչա խաւարութեան սկիզբը, առաջին անկերպարանութիւնը, ասոր հետեւում են սիւլուրեան ջրհեղեղների ժամանակն ու քարագարը, յետոյ գալիս են հսկայական սոլուններն ու չորորդական խաւը իւր մամմութեներով և պահաժանիներով, ապա—քարայրի գարն ու նախնական մարդկութիւնը, հուսկ յետոյ—միջին գարեր, և վերջապէս—արդի ժամանակը:

Այս երկրորդ գաւառի ու զեւորութիւնը վերջացնելով՝ գուք կը մտնէք երրորդ գաւառը, որ է —տիեզերացոյց. Չեր շուրջը արեգակնային գրութիւնն է, իսկ գուք երկրագնտի վերայ էք. այդ տեղ կարող են 150 մարդ տեղաւորուիլ. Երկրագունտը՝ կօնական հիմքի վերայ հաստատուած լինելով՝ շատ կամացուկ է պտտվում, այնպէս որ միջի մարդիկ չեն զգում այդ շարժումը. Չեր դիմաց սփիւռը երկնակամար է պատկերացնում, իսկ որովհետեւ գուք չէք նկատում զնտի շարժումը, ձեզ կը թուռի, իրը թէ երկնակամարն է պտտվում. Երեգակը կը ճառագայթէ ելեքտրական լուսի ահազին իրձերի միջնորդութեամբ, համապատասխան հեռաւորութեան վերայ կը փայլի լուսինը, իսկ ապա—անթիւ անհամար պայծառ աստղեր. Այդ զնտի հինգ րոպէի շափ պայտար հաւասար կը լինի 24 ժամերին, որով օրերի և ամիսների փոփոխութիւնները մի քանի ժամի ընթացքում կը կատարուին հանդիսատեսների առաջ. — Մարդկութիւնը շատ գարեր աշխատել է շշափելի կերպով բացատրել ժողովրդեան բազմութիւններին տիեզերքի համատեսիլ, բայց արդէս հանձարեկ կերպով՝ առաջին անգամ է կենդանացնում երկնիքի մեքենայութիւնը.

\*\*\*

Դարձեալ Փարվի աշխարհական, Այն յանձնաժողովի մէջ, որ նշանակուած է 1900 թ. Փարվիդի աշխարհանդիսի համար առաջարկուելիք խորհուրդները քննելու և հաւանելու իրաւասութեամբ ստացուիլ են ամէն լուսաւեալ երկիրներից ահազին քանակութեամբ առաջարկութիւններ և ծրագիրներ. Թղթակից-հնարագէտների թուռում սակաւ շենինակ ուսուունարան յաձմախող մանչ և աղջիկներ որոնցից մին քան զմիւս աւելի անլուր մեխա և առաջարկում աշխարհանդիսը յաւերժացնելու

համար. Մի ամերիկացի խորհուրդ է տալիս Նիազարի ջրվէժը կազմել բնական լնդարձակութեամբ. միւսը մշակել է բարելոնեան աշտարակի նախագիծը, նորուեցայի նաւապետը առաջարկում է կառուցանել մեծածաւալ աւազան, Սինա գետի հետ ջրանցքով միացած, մի քանի կենդանի կէտ-ձկների համար. Նա որպէս հմուտ կէտ-որսացող իւր ծառայութիւնն է մատուցանում և յօյս ունի մեծամեծ գումարներ վաստակել:

\*\*\*

Նիւ-Եօրկի եինցրական ցուցահանելիս. Այս ցուցահանդիսի բացումը արտասովոր կերպով է կատարուել. Մըկ-Կինլեյն ոչ թէ Նիւ-Եօրկ եկաւ այդ տեղի ցուցահանդիսը Վաշինգտոնից բաց արաւ ելեքտրականութեան միջոցաւ. այս վարձանով գործածեց այն հոչակաւոր ոսկէ բանալին, որպէս իւր նախորդ Կինլեյնովը 2իկագոյի աշխարհահանգելը բաց է արել. Երբ որ նախագահը Վաշինգտոնում այդ բանալին ըրջեց յատուկ նշանակած կողպէքի մէջ, իսկոյն Նիւ-Եօրկում ելեքտրական հանդիսի բոլոր մեքենաները սկսեցին շարժուիլ և բանել. մի և նոյն ժամանակ նա հեռազրով հաղորդեց, թէ գոհութեամբ բաց է անում Նիւ-Եօրկի ելեքտրական հանդիսը և հանդիսակից է գառնում. օգոստ քաղելով ելեքտրական հաղորդակցութեան ամենակատարեալ եղանակից: Նախագահի օգնականն էլ մի ճառ խօսեց հեռախօսով, որ իսկոյն ձայնագիր մեքենայով հաղորդուեցաւ ներկայ հանդիսատեսներին. Այս տեղ հաստատուեցաւ լուրիր հաղորդելու զարմանալի արագութիւնը. Հազիւ թէ ցուցահանդիսի պաշտօնական նախագահը կարողացաւ աւարտել իւր ճառը, որ նա ասաց Մըկ-Կինլեյի և փախ-նախագահի խօսքերի առմիւր, իսկոյն ցրուեցան այդ բոլոր ճառերի տպագրական թերթը, որով մի քանի բոպէի միջոցում տպագրուել, կարտուել և բոլորապէն պատրաստուել են:

\*\*\*

Օդապարիկների վերահալք. Զարեքչարթի մայիսի 27-ին (յունիսի 8-ին), որոշ նշանակած ժամին պէտք է Փարվիդից Ստրազրուրդից, Միւնիսինից, Քերինից, Ավենայից Պարշաւից, Պետերուրդից՝ միանուագ բարձրանային օդապարիկներ, ուսումնական հետազոտութեանց նպատակով, Յիշեալ կայանների ամէն մէկից պէտք է դէպի վեր թողնուելն մի քանի օդապարիկներ, մէջը մարդ նստած կամ ոչ բայց ամէնքը արձանագրող գործիքներ ունենալով, որպէս զի պիտանի տեղեկութիւններբերն վերկեց օդի խտութեան, խոնաւութեան և բարեխառնութեան մասին. Խէչպէս յայտնի է անմարդ օդապարիկները երկար ճանապարհ են կարում իմաս-

արգելքներով, մանաւանդ լեռնոտ և անտառախիտ վայրերում: Աւստի և օգտական է, որ այն տեղից ուր որ օգապարիկը նշմարուի, մերձաւոր կենդրուավայրերին հեռագրուի: Չոր օր ասենք թէ մի օգապարիկը հարաւից գալով, զկնի ճաշու 2 ժամին, անցնում է X տեղի 2000 մետր (մոտ 2 վերաս) բարձրութեան վերայ, որով հաւանական է դառնում, թէ մօտաւորապէս օգապարիկը ուր կարող է իջնել: Եթէ մի այսպիսի անմարդ օգապարիկ գտնուի, հարկաւոր է իւր բալոր գործիքներով լաւ ծրաբել և նախնական տեղը վերադարձնել: Այսպիսի գէպքերում չնորհքով վարուելու համար կարգադրել են, որ իւրաքանչիւր օգապարիկ ունենայ մի մի գրօշակ՝ վերան մի քանի լեզուներով հետեւալ բառեր գրած: «Զգոյշ, Հանգցրեցէք կրակը, լուցին, ծխաքարչը, ծխափողը: 25 լուրի վարձատրութիւն: Վեր առ էք գեղին քսակը և կարգացէք»: Այդ քսակի մէջ գտնուած հրահանգութիւնը նկարագրում է օգապարիկը գտատարիկելու և գործիքները ինամանից ծրաբելու հանգամանքները: Յոյս կայ, որ այսպիսի միջազգային օգաչուութիւնները մի ժամեծ բարիքների պատճառ պիտի գառնան:

\* \*

Կարկտահարութեան առաջն առնելու վարժեր: Յայտնի է թէ երբեմն կարկուտը ի՞նչ աւերութեանը է գործում այգիներում և արտերում: Աւստրիայում այժմ այդ թշուառութիւնից զգուշանում են Շախերի հետեւալ փորձերով, Արկտից վնասուող վայրերի ամենաբարձր տեղերում կայաններ են շինում: Մտել ստեղ միախուռն հրացանութեան համար: Կայանների մէջ պահուած են սանդաձե 3—5 փթանոց վագրիկ ու մըլնից հրետանիներ, որոնք կոչվում են մարտրս-սանդաշ: Խոկ կայարանների տանիքի մէջ հաստատուած են մեծ մեծ (օգ սղմող) ձագարներ: Որոնց տակ որ սանդարներ են զրգում և այնպէս վառօգ են պայթեցնում՝ ուղահայեաց դէպի վեր: Փորձերը ցոյց են տալիս, որ շարունակ մի քանի պայթումներից կարկան ամպերը պատառվում են, որով այլ ևս կարկուտ չի կազմվում: Միայն հարկաւոր է որ հրացանութիւնը շարունակուի անընդհատ: Նոյն խոկ անձրեւ տեղալու ժամանակ, Տաքացած և սղմուած օդի ներգործութիւնը ամպերի վերայ տարածվում է 300—400 մետր հեռաւորութեամբ դէպի վեր: Խոկ թէ մի տեղում պատառուած կարկան ամպը արգեօք ուրիշ տեղում չի հաւաքուի և այն տեղից կարկուտ չի թափի: — այդ բանի երկիւղ չկայ: վասն զի մի անդամ պատառուած ամպը՝ այլ ևս ոչ մի վասնդ չի սպառնում ոչ մի կողմին: Հրացանութեան յաջողութեան համար հարկաւոր է, որ իւրաքանչիւր վայրում 6—8 կայան լինի կառուցած: Խոկ կայաններում վեց վեց սանդարներ պատրաստ լինին: Երկի

թէ այգեգործութիւնը և առ հասարակ գիւղական անտեսութիւնը մեծ օգուտ պիտի քաղի այս էժանազին հնարից (տախտակից շինած կայանը հազիւ 100 բուռլի է նստում):

\* \*

Աշխարհի շուրջ ճանապահուցելու բոշակ: Մի աշխայտ բարեգործ Փարիզի համալսարանի խորհրդակեան տրամադրութեան ներքոց է դրել 75,000 ֆր., որպէս զի աշխարհքի շուրջ ճանապարհորդելու համար 5 թոշակ կարգուի: Իւրաքանչիւրը 15,000 ֆր. քանակութեամբ: Թոշակառուները առաւելապէս ուսուցիչներից պիտի ընտրուին և 15—18 ամիս ժամանակ պիտի նորիրեն այս ճանապարհորդութեան այն վախճանուի: Որ իւրեանց մտաւոր հորիզոնը լայնացնեն և առ տեղեաւն ուսումնասիրեն զանազան ազգերի ընկերական կեանքը: «Ասան զի»: այսպէս իմաստնաբար է խորհրդածում բարեգործը: Կերթուած պատառների ուսուցիչները պէտք է զրահաւորուած լինին թանձրացեալ և կենդանի ծանօթութիւններով և իւրեանց վերացական գիտութիւնների համար պիտի ունենան զգայական իրազնութեամբ ստացած աշխարհքի տեղեկութիւն այնպէս, ինչպէս որ աշխարհք այժմ է: Ապա ուրեմն աշխարհք տեղեկութիւն այնպէս, ուրեմն աշխարհք առ աշխարհք այժմ է: Ապա ուրեմն աշխարհք տեղեկութիւն առաքած երիտասարդները պէտք է ոչ թէ ծանրաբեռնուին որևէ մասնաւոր գիտնական պատուէր կատարելու պարտաւորութեամբ: Այլ թող գնան և յատկապէս միայն տպաւորութիւններ ժողովներու: Նորա կարեւորութիւն չունին տուն վերագառնալ մի որ և է բնաբանով Սորբոնի գոկտորութեան սիտղոսի արժանանալու համար: Այլ պէտք է իւրեանց ապագայ աշխարհութերին հազորդեն միւս ուժեղ ազգերի մեծութիւնից և արգիւնաւորութիւնից ստացած գալար պապաւորութիւնները: Թոշակառուների ընտրութեան համար բարեգործը միակ պայման է դրել որ նորա անզիւհական լեզու գիտենան: Երիտասարդ լինին և աշխայժ հօգի ունենան:

U. U.

### ԳՊՐՈՅԸ և ՈՒՍՈՒՑԻՉԸ.

(ԱԴՈՒՅ ԳԻՍՍԵՐՎ. ԷԳԻ ՄԱՆԱՎԱՐԺԱԿԱԿԱՆ ՄՏՔԵՐԻՑ):

Պարոցը ապագան ստեղծող ոյժերից մէկն է: Իմէկ այդ ոյժը լաւ է կազմակերպուած և ուղղուած ուր հարկն է: ապա նա հանդէս է զալիս իրեւ բարերար ոյժ: սակայն միայն երազողներն են, որ գպրոցը զլիսաւոր ծառայութիւն մատուցանողը կամ պատասխանատուն են անուանում:

«Ում ձեռքումն է գպրոցը նրա ձեռքումն է և ապագան: Զափազանցութիւն է այդ, հետեւապէս